



Պայթյուն՝ բուրգերի մոտ



Դադարեցնել, եթե անվտանգ չեն



Ես ամաչում եմ, երբ կարծրում եմ



Կործանված օդանավի հետքերով




# արտակարգ թերթ

N 12 (381) 8.4.2011 - 14.4.2011 www.emergency.am

## Լավագույն ուսանողները կապահովվեն աշխատանքով

### Ապրիլի 7-ը՝ մայրության և գեղեցկության փոն



Գաբրիել հրեշտակապետը ողջունում է Մարիամին և ասում. «Սուրբ Հոգին կգա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետև նա, որ քեզանից է ծնվելու, սուրբ է և Աստծո որդի կկոչվի»:

Ապրիլի 6-ին ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում ԱԻ նախարար Արմեն Երիցյանը հանդիպեց ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին: Սա նախարարի առաջին ընդլայնված հանդիպումն էր ակադեմիայի ուսանողների հետ, որին ներկա էին հիմնականում ավարտական կուրսերում սովորող երիտասարդները: ԱԻ նախարար Արմեն Երիցյանն ուսանողներին ներկայացրեց կառույցի զարգացման ծրագրերն ու հավաստեց, որ ուսումնառությունից հետո լավագույն շրջանավարտներն աշխատանքի կանցնեն նախարարության համակարգում:

- Շատ երկրներ արտակարգ իրավիճակների ոլորտը ծանաչել են որպես գերակա ուղղություն: Մեր երկրում եւս Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է լինի լավագույններից մեկը: Մենք արդեն ունենք Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ, ինչը նույնպես չափազանց կարևոր է, քանի որ ոչ մի նախարարություն չի կարող միայնակ դիմակայել աղետներին:

Մեր մյուս գերակա խնդիր-

ներն են «911» ծառայության ստեղծումը և աղետների բժշկության զարգացումը: Այս վերջինի համար ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում պետք է ավելացվեն առաջին բուժօգնությանը հատկացված ժամերը: Կկազմակերպվեն նաև առանձին, լրացուցիչ դասընթացներ՝ թե՛ ուսանողների, թե՛ նախարարության աշխատակիցների համար: Նրանք բոլորն անխտիր պետք է տիրապետեն առաջին բուժօգնության հիմունքներին:

Առաջին հերթին աշխատանքի պետք է տեղավորվեն մեր պատրաստած մասնագետները, այլ ոչ թե մյուս ԲՈՒՀ-երի շրջանավարտները: Սակայն ուզում են շեշտել, որ մեզ անհրաժեշտ են գրագետ մարդիկ, լավ պատրաստված մասնագետներ, որոնք մասնագիտական հմտություններից բացի՝ լիարժեք տիրապետում են առնվազն մեկ օտար լեզվի (չի՛հաված՝ ռուսերենը) և համակարգչին: Մենք ընտրելու ենք լավագույններին: Իմացեք, որ այսուհետ նախարարության կադրերը համալրվելու են ակադեմիայի լավագույն շրջանավարտներով: Դուք մեր երեխաներն եք, ու եթե նպատակահարմար եք գտել կր-



թություն ստանալ այս ԲՈՒՀ-ում, ուրեմն՝ մենք պետք է հոգ տանենք ձեր ապագայի մասին:

Այս տարի արդեն պետքյուջեով մենք 60 ուսանող ենք ընդունելու, որոնք պետք է դասերի ժամանակ համազգեստ կրեն: Ուսումնառությունից հետո նրանք պետք է պայմանագրի համաձայն՝ 3-5 տարի աշխատեն մեր համակարգում:

Կարծում են, որ ուսանողների հանդիպումները մեր ղեկավար կազմի ներկայացուցիչներ-

րի ու փորձառու մասնագետների հետ պետք է առավել հաճախ լինեն, որպեսզի նրանք եւս կարողանան իրենց փորձն ու գիտելիքները փոխանցել երիտասարդ մասնագետներին: Ես արդեն տվել եմ համապատասխան հանձնարարականներ, ու կազմված գրաֆիկի համաձայն՝ նման գործնական հանդիպումներն ավելի են շատանալու:

Մենք պետք է մեկ ընտանիքի նման միասին գնանք >>> 4 առաջ:



Մարտի 11-ին ճապոնիայում տեղի ունեցավ 9 մագնիտոլու ուժգնությամբ երկրաշարժ, որը հավասարազոր է 12 բալի: Նման երկրաշարժը մեկ այլ՝ համեմատաբար ավելի քիչ զարգացած երկրում գետնին կհավասարեցնե՞ր ամեն ինչ, սակայն ճապոնիայում

շենքերը դիմացան ցնցումներին: ԱԻՆ ՍՊՍԾ տնօրենի տեղակալ Աշխեն Թովմասյանն ասում է, որ ճապոնիայի մասին տեսանյութերում բոլորովին դժվար չէր տեսնել, որ, ի տարբերություն հայաստանցիների, որոնց սովորեցնում են երկրաշարժի առաջին ցնցում-

## Բացառել ցածրորակ շինարարությունը

ների ժամանակ անմիջապես պատասխարվել բնակարանում՝ նախապես որոշված հնարավորինս ապահով տեղերում, ճապոնացիները փորձում էին պահել դարակների վրա դասավորված գրքերը, տուփերը, թղթերը:

- Դա մտածելու տեղիք է տալիս, նշանակում է՝ ոչ թե ճապոնացիները չգիտեն, թե ինչ պետք է անել, ինչպես պետք է պաշտպանվել երկրաշարժից, այլ՝ նրանք իրենց չափազանց ապահով են զգում այն շենքերում, որտեղ ապրում են:

ճապոնիայում աղետի պատճառով ավելի քան 11 000 մարդ զոհվեց, մոտ 17 000-ը համարվում են կորած: Սակայն զոհերի ու ավերածությունների մեծ թվի պատճառը ոչ թե երկրաշարժն ու ցնցումներն էին, այլ՝ դրանց հաջորդած ցունամին: Եթե 10 մետր բարձրությամբ ալիքը չլիներ, երկրաշարժի

հետևանքները նվազագույն կլինեին, քանի որ ճապոնացիներն իրենց շինությունները չափազանց ամուր են կառուցել:

Ցավոք, նման սեյսմոլոգիայում շենքերով չի կարող պարզեցվել Յայաստանը, որը նույնպես սեյսմիկ ակտիվ գոտում է գտնվում: Ե՛հիշտ է՝ 12 բալանոց երկրաշարժը մեզ մոտ քիչ հավանական է, սակայն դեռ հարց է՝ արդյո՞ք մեր շինությունները կդիմանան ավելի քիչ ուժգնությամբ ցնցումներին:

1988 թվականին Սպիտակում տեղի ունեցած երկրաշարժից Յայաստանը շատ դասեր քաղեց: Նախ պարզվեց, որ թերազնահատված է սեյսմիկ վտանգը, այսինքն՝ հնարավոր երկրաշարժի առավելագույն ուժը: Խորհրդային միության տարիներին որոշվել էր, որ մեր երկրում ամենաուժեղ երկրաշարժը չի գերազանցի 8 բալը, ու բոլոր շենքերը կառուցել էին

ըստ այդ հաշվարկների:

- Սովետական բոլոր երկրներում միշտ աշխատում էին չգերազանցել, հաշվարկվածից ավելի ամուր չկառուցել՝ բացառությամբ հատուկ շենքերի: Օրինակ, օպերայի շենքը մեկ բալ ավել էր հաշվարկվել, բայց մնացածը՝ տնտեսական նկատառումներով, ավելի թույլ ցնցումների համար են կառուցված, - ասում է Քաղաքաշինության նախարարության Քաղաքաշինական պետական տեսչության զխմավոր մասնագետ Գագիկ Սարգսյանը:

Սպիտակի աղետից հետո վերագնահատվեց Յայաստանի սեյսմիկ վտանգն ու ընդունվեց, որ մեր երկրում հնարավոր են 9 եւ ավելի բալանոց երկրաշարժեր: Դրանից հետո խնդիր առաջացավ վերանայել նաև շինարարական >>> 4 նորմերը:

# քրոնիկոն



Աին  
միացյալ հեռախոսահամարն է  
1-01

### Անկում 3-րդ հարկից

Մարտի 31-ին, ժամը 17.32-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ Լուկաշինի թիվ 3 տան 3-րդ հարկից մարդ է ընկել:  
Դեպքի վայր է մեկնել ԵԿԿ օպերատիվ խումբը:  
Տեղում պարզվել է, որ շինարարական աշխատանքներ կատարելիս 3-րդ հարկից վայր է ընկել 1958 թ. ծնված Աշոտ Հարությունյանը, որը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:  
Տուժածի առողջական վիճակն, ըստ բժիշկների, ծանր է:

### Պարահար կիրճում

Մարտի 31-ին, ժամը 20.05-ին ահազանգ է ստացվել, որ Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի մոտ Ձորագետի կիրճը մարդ է ընկել, վնասել ոտքի հողը եւ նրան դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:  
Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:  
Ժամը 21.20-ին փրկարարները, մոտ 12 մ խորությամբ կիրճից, դուրս են բերել Ստեփանավանի բնակիչ, 1994 թ. ծնված Վրույր Սուքիասյանին եւ հանձնել հարազատներին:

### Խեղդվել է ջրամբարում

Ապրիլի 1-ին, ժամը 09.25-ին ահազանգ է ստացվել, որ Կոտայքի մարզում Հրազդանում գտնվող Աղբյուրակ ջրամբարն է ընկել մի քաղաքացի:  
Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարները ջրամբարից դուրս են բերել Հրազդանի Կենտրոն թաղամասի 44-րդ շենքի թիվ 66 բնակարանի բնակիչ, 1959 թ. ծնված Ռաֆիկ Մանուչարյանի դին եւ հանձնել շտապօգնության աշխատակիցներին:

### Ջրահեղձում Քասախ գետում

Ապրիլի 6-ին, ժամը 17.20-ին ահազանգ է ստացվել, որ Քասախ գետում՝ Աշտարակի «Վանա լիճ» ռեստորանի մոտ, երկու քաղաքացի են ընկել գետը: Երկուսից մեկը տեղի ուժերով դուրս է բերվել, իսկ երկրորդ քաղաքացին, հավանական է, ջրահեղձվել է եւ որոնողական աշխատանքների համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:  
Դեպքի վայր են մեկնել մարզային փրկարարական ջոկատը, օպերատիվ խումբը եւ 2 ջրատուգակ:  
Սկսվել են որոնողական աշխատանքներ:

Ժամը 19.00-ին ջրի հոսքի ավելացման պատճառով (60 խմ/վրկ) որոնողական աշխատանքները դադարեցվել են: 1961 թ. ծնված Մանվել Ավետիսյանի դին չի հայտնաբերվել, իսկ Աշտարակի հիվանդանոց տեղափոխված՝ 1963 թ. ծնված Աշոտ Կարապետյանի առողջական վիճակը, ըստ բժիշկների, ծանր է:  
Ժամը 20.05-ին ջրահեղձված Մանվել Ավետիսյանի դիակի որոնողական աշխատանքների համար էջմիածնին հարակից Քասախ գետի հատված է մեկնել Արմավիրի մարզային փրկարարական ջոկատը:  
Միևնույն ժամանակ՝ Արմավիրի մարզի Ամբերդ, Մրգաստան, Ծաղկունք, Ապագա եւ Ջրառատ գյուղերի գյուղապետերին հանձնարարվել է դիտարկումներ կատարել գետի ափամերձ հատվածներում:

Ժամը 21.00-ին որոնողական աշխատանքները դադարեցվել են եւ կվերականգնվեն ապրիլի 7-ին:

### Ներսիս է կամրջից

Ապրիլի 1-ին «1-03» ծառայությունից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 12.43-ին երեւանի «Հաղթանակ» կամրջից քաղաքացի է իրեն վայր զցել:  
Դեպքի վայր է մեկնել ԵԿԿ օպերատիվ խումբը:  
Պարզվել է, որ ինքնասպան է եղել Երեւանի Ծովակալ Իսակովի պողոտայի 4-րդ շենքի թիվ 48 բնակարանի բնակիչ, 1957 թ. ծնված Արարատ Այվազյանը:

### Վերելակն ընկել է

Ապրիլի 1-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 16.48-ին պատահար է տեղի ունեցել Երեւանի Քանաքեռի շրջանցիկ թունելի թիվ 43/2 հասցեում

գտնվող «Չու-Չու» ՄՊԸ-ի սուրճի արտադրամասում: Շենքի վերելակի՝ 3-3,5 մ բարձրությունից ընկնելու հետեւանքով վերելակում գտնվող աշխատակիցներ, Կոտայքի մարզի Չարենցավանի բնակչուհի, 1984 թ. ծնված Դիանա Վիրաբյանը, Արմավիրի բնակչուհի, 1979 թ. ծնված Նարինե Ավագյանը եւ 1965 թ. ծնված Կարինե Գասպարյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:  
Բժիշկները տուժածների առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության:

### Օգնում են փրկարարները

Ապրիլի 2-ին, ժամը 13.22-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ռուբինյանց 1Ա շենքի թիվ 18 բնակարանի բնակչուհի, 1931 թ. ծնված Օլգա Խոջանյանը ընկնելով ստացել է կոնքի կտորվածք եւ հետագա բժշկական օգնություն ստանալու նպատակով անհրաժեշտ է նրան տեղափոխել հիվանդանոց:  
Տուժածի ծանրամարմին (մոտ 120 կգ) լինելու պատճառով նրան տեղափոխելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:  
Դեպքի վայր են մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ եւ ԵԿԿ օպերատիվ խմբերը:  
Պարամեդիկ-փրկարարներն անշարժացրել են մարմնի կտորված հատվածը, որից հետո փրկարարները տուժածին տեղափոխել են պատգարակի վրա, իջեցրել 10-րդ հարկից ու հանձնել շտապօգնության աշխատակիցներին:

### Հայրնաբերվել է ական

Ապրիլի 2-ին, ժամը 14.05-ին ահազանգ է ստացվել, որ Արմավիրի մարզի Ջարթոնք գյուղի մոտակա ավազահանքում հայտնաբերվել է ականանման իր:  
Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը: Տեղեկացվել են նաեւ ՀՀ ՊՆ եւ ԱԱԾ օպերատիվ հերթապահները:  
Դեպքի վայրում են գտնվել ոստիկանության աշխատակիցներին:  
Ժամը 17.25-ին ՀՀ ՊՆ ականագերծող մասնագետների խումբը, տեղում պայթեցման եղանակով, վնասագերծել է ձեռքի հրետանային ճնակահանքի ականը:

### Մեքենան շրջվել է

Մարտի 31-ին, ժամը 18.16-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Դավիթ Անհաղթի 2 շենքի մոտ տեղի է ունեցել ավտոպատահար:  
Դեպքի վայր է մեկնել ԵԿԿ օպերատիվ խումբը:  
Դեռևս չպարզված հանգամանքներում «Միթուբիշի Պաշերո» մակնիշի 09 ՍՍ 399

պետհամարանիշով ավտոմեքենան (վարորդ՝ 1991 թ. ծնված Էդգար Սարգսյան) դուրս է եկել ճանապարհի հանդիպակաց հատված եւ շրջվել: Ավտոմեքենայում եղել է 4 ուղևոր, որոնցից 1991 թ. ծնված Արտաշես Փայլանը ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել Միքայելյանի անվան բժշկական կենտրոն: Մյուս 3 ուղևորները չեն տուժել:  
Տուժածի առողջական վիճակն, ըստ բժիշկների, ծանր է:

### Մեքենան բախվել է գազադարին

Ապրիլի 2-ին, ժամը 02.44-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Դրոյի փողոցի թիվ 37 տան մոտ ավտոմեքենան բախվել է գազատար խողովակին եւ առկա է գազի արտահոսք:  
Դեպքի վայր են մեկնել մեկ մարտական հաշվարկ, ԵԿԿ եւ հրդեհաշիջման կազմակերպման բաժնի օպերատիվ խմբերը:  
Դեռևս չպարզված հանգամանքներում «ՎԱԶ-2110» մակնիշի 24 ՏԼ 384 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից եւ բախվել գազատար խողովակին, ինչի հետեւանքով առաջացել է գազի արտահոսք: Բախման արդյունքում ավտոմեքենայի վարորդ՝ 1989 թ. ծնված Սարգիս Շահնազարյանը եւ ուղևոր՝ 1990 թ. ծնված Գուր Ղազարյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:  
Մինչ շտապօգնության բրիգադի ժամանումը՝ ԵԿԿ օպերատիվ խմբի պարամեդիկները տուժածներին ցուցաբերել են առաջին բուժօգնություն:

«1-04» ծառայության աշխատակիցները դադարեցրել են գազի արտահոսքը:  
Բուժօգնություն ստանալով՝ Գ. Ղազարյանը դուրս է գրվել հիվանդանոցից, իսկ Ս. Շահնազարյանի առողջական վիճակը, ըստ բժիշկների, ծանր է:

### Դեղորայքային թունավորում

Ապրիլի 1-ին «1-03» ծառայությունից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 09.33-ին դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Մամիկոնյանց 27Ա շենքի թիվ 40 բնակարանի բնակիչ, 1971 թ. ծնված Արթուր Դուրզարյանը:  
Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է:

\*\*\*  
Ապրիլի 2-ին Արագածոտնի մարզից հայտնվել են, որ ժամը 16.10-ի սահմաններում >>>

## Միջազգային լուրեր

### Ռադիոակտիվ անձրևի Հարավային Կորեայում

Մոտ 130 մանկապարտեզ ու դպրոց է փակվել Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում՝ ռադիոակտիվ տեղումների հետ կապված անհանգստությունների պատճառով:  
Դպրոցներից դուրս սպորտային պարապմունքների քանակը քչացվել է աշակերտների ծնողների խնդրանքով:  
Կրթության համակարգի ներկայացուցիչների պնդմամբ՝ սրանք կանխարգելիչ միջոցառումներ են: Հարավային Կորեայի վարչապետի գրասենյակից հայտնել էին, որ ռադիոակտիվ մակարդակն անձրևաջրերում շատ ցածր է եւ առողջության համար վտանգավոր չէ:  
Անհանգստությունն այստեղ սկսել մեծանալ, երբ օդերևութաբանները հայտարարեցին, որ քամին փչելու է Ծալոնիայի կողմից, ինչի հետեւանքով ճառագայթային Ֆոնո Հարավային Կորեայում կարող է աճել:

Հարավային Կորեայի միջուկային անվտանգության գործակալությունն ավելի վաղ հայտնել էր, որ Չեջո կղզում տեղացած անձրևի մեջ ռադիոակտիվ յոդի ու ցեզիումի պարունակություն է հայտնաբերվել, բայց դրանք քանակը չէր կարող առողջության համար վտանգ ներակայացնել:

### Իսրայելում բախվել են գնացքներ

Խոշոր երկաթուղային վթար է տեղի ունեցել Իսրայելում: Նեթանիա առողջարանային քաղաքից ոչ հեռու բախվել են երկու մարդատար գնացքներ:  
Նախնական տվյալներով, տուժել է 60 մարդ: Նրանց տեղափոխվել են հիվանդանոց՝ մեծ մասամբ թեթեւ վնասվածքներով:  
Դեռևս չպարզված հանգամանքներում, գնացքները, որոնք հանդիպակաց էին սլանում, հայտնվել են նույն գծի վրա եւ բախվել իրար: Նախնական տվյալներով, վթարի

պատճառը կարող էր մեքենավարներից մեկի սխալը լինել:  
Գնացքների արագությունը մեծ չի եղել, այնուամենայնիվ, բախման հետեւանքով առջեւի վագոնները լրջորեն վնասվել են:

### Պայթյուն՝ բուրգերի մոտ

Եգիպտոսի գլխավոր տեսարժան վայրի՝ բուրգերի մոտ տեղի ունեցած պայթյունի հետեւանքով տուժել է 3 մարդ: Պայթյունը տեղի է ունեցել Պիլարի փարավոնների դամբարանից 150 կմ հեռավորության վրա:  
Ոստիկանների խոսքերով՝ տուժածները մետաղե իր են գտել ավազներում եւ փորձել են փորել-հանել մտածելով, որ այն



կարող է թանկարժեք լինել:  
Այդ պահին էլ իրը պայթել է՝ լուրջ վնասվածքներ հասցնելով այդ երեքին:  
Ոստիկանները մշել են, որ տուժածները թմրամիջոցների առքուվածառքով զբաղվող անձինք են: Դեպքի մանրամասները ճշտվում են, տարվում է հետաքննություն:

### Ռադիոակտիվ Բաթումիում

Աջարական Բաթումի քաղաքի նավահանգստի տարածքում հայտնաբերվել է ուժեղ ռադիոակտիվ աղբյուր: Քաղաքային իշխանություններն անհապաղ տարհանել են նավահանգստի աշխատողներին:  
Փակվել են նավահանգիստ տանող բոլոր ճանապարհները, մոտաքր վտանգավոր գոտի խստիվ արգելված է:  
Ռադիոակտիվ վտանգի աղբյուրը եղել է մետաղի ջարդոնը: Թե ինչպես է վտանգավոր բեռը հայտնվել նավահանգստի տարածքում, պարզում են համապատասխան մարմինները: Հայտնի է միայն, որ ռադիոակտիվ ցեզիում-137-ը հայտնաբերվել է երկաթուղային պլաստֆորմում՝ մետաղի ջարդոնով վազոնում:  
Ֆահիա Թյունիբայան



**>>>** դեղորայքային թունավորման նախանշաններով Աշտարակի հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի բնակչուհի, 1980 թ. ծնված Անահիտ Ակրտչյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

\*\*\*

Ապրիլի 5-ին «1-03» ծառայությունից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 10.11-ին Երեւանի Նորք Մարաշ 11-րդ փողոցի թիվ 47 տան բնակչուհի, 1990 թ. ծնված Աննա Սարգսյանը ստացել է դեղորայքային թունավորում: Նրան տեղում ցուցաբերվել է առաջին բուժօգնություն և վերջինս հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվելուց:

\*\*\*

Ապրիլի 6-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 01.30-ին դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Շիրակի փողոցի 4-րդ շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ, 1969 թ. ծնված Գրիգոր Սարգսյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

### Շնուլ գազ

Ապրիլի 3-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, ժամը 11.09-ին շնուլ գազի թունավորման նախանշաններով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի

Նորքի 6ա տան բնակչուհի, 1970 թ. ծնված Կարինե Հովհաննիսյանը: Ըստ բժիշկների՝ նրա առողջական վիճակը բավարար է:

\*\*\*

Ապրիլի 3-ին, ժամը 17.00-ին Երեւանի Ռոստոմյան 70 հասցեից շնուլ գազից թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել Սպիտակի բնակիչներ՝ 1991 թ. ծնված Անուշ Խաչատրյանը և 1990 թ. ծնված Վերգինա Ասատրյանը:

Բժիշկների գնահատմամբ՝ նրանց առողջական վիճակը բավարար է:

\*\*\*

Սյունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ ապրիլի 3-ին, ժամը 00.40-ի սահմաններում շնուլ գազից թունավորումով Կապանի հիվանդանոց են տեղափոխվել նույն քաղաքի Շահումյան 39ա շենքի 16-րդ բնակարանի բնակիչներ՝ 1966 թ. ծնված Աբրահամ Սարգսյանը և 1977 թ. ծնված Մարինե Ղազարյանը, 17-րդ բնակարանի բնակիչներ՝ 1969 թ. ծնված Նվեր Դանիելյանը, 1985 թ. ծնված Հայկուհի Խուրշուդյանը, 1965 թ. ծնված Անահիտ Առաքելյանը և 1968 թ. ծնված Ռիտա Սարգսյանը: Տուժածները ստացել են առաջին բուժօգնություն և դուրս գրվել:

\*\*\*

Ապրիլի 6-ին, ժամը 10.45-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ շնուլ գազից

թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել Երեւանի Դավիթաշեն համայնքի 10-րդ փողոցի թիվ 20 տան բնակիչներ՝ 1975 թ. ծնված Լուսյա Պետրոսյանը և 1993 թ. ծնված Տիգրան Կարապետյանը:

Բժիշկների կողմից տուժածների առողջական վիճակը գնահատվել է միջին ծանրությամբ:

### Ձնաբուլ

Ապրիլի 5-ին, ժամը 02.21-ին ահազանգ է ստացվել, որ Սպիտակ-Ապարան ավտոճանապարհին՝ Փանբակի ուղղաններում, ճնաբքի պատճառով խցանում է առաջացել և անհրաժեշտ է օգնություն: Այս մասին տեղյակ է պահվել նաև «Սպիտակ ճանապարհ» ընկերությունը:

Երեք միավոր տեխնիկայի օգնությամբ ճանապարհը մաքրվել է: Խցանումից դուրս են բերվել մոտ 40 մարդատար և 1 բեռնատար ավտոմեքենա:

**Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 46 դեպք, որոնց գերակշիռ մասը տեղի է ունեցել խտածածկ տարածքներում:**

### Հրդեհ բնակարանում

Ապրիլի 6-ին, ժամը 13.34-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Արցախի պողոտայի 61-րդ շենքի թիվ 6 բնակարանում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ և ԵԿԿ օպերատիվ խումբը: Հրդեհը մարվել է ժամը 13.52-ին:

## սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. մարտի 31-ից մինչև ապրիլի 6-ը ՍՊԱԾ-ի դիտարանը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ ուժգնությամբ գրանցել է երկու երկրաշարժ: Առաջինը տեղի է ունեցել ապրիլի 1-ին և էպիկենտրոնը գտնվում է Վեդի քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք, իսկ երկրորդը՝ ապրիլի 2-ին, Մարտունի քաղաքից 16 կմ հարավ:

**Տարածաշրջանում.** 3 բալ և ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել տասներկու երկրաշարժ: Մարտի 31-ին Իրանում՝ հոյ քաղաքից 8 կմ հարավ-արևմուտք գրանցվել է 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ, որին ապրիլի 3-ին և 4-ին հետևել է երկու ստորգետնյա ցնցում՝ 3 բալ և 3-4 բալ ուժգնությամբ: Հաջորդ յոթ սեյսմիկ իրադարձությունների ուժգնությունն էպիկենտրոնում կազմել է 3 բալ. ապրիլի 2-ի երկրաշարժերի էպիկենտրոնը գտնվում է Թուրքիայի Դոդուբայազետ քաղաքից 29 կմ հյուսիս-արևելք և Ադրբեջան-Իրան-Թուրքիա-Հայաստան սահմանային գոտում՝ Նախիջևան քաղաքից 72 կմ հյուսիս-արևմուտք, ապրիլի 3-ինը՝ Հայաստան-Թուրքիա սահմանային գոտում, Մասիս քաղաքից 5 կմ հարավ, և Վրաստան-Հայաստան սահմանային գոտում՝ Դմանիսի քաղաքից 39 կմ հարավ-արևմուտք, նաև 2

ցնցում՝ Իրանի Մակու քաղաքից 35 կմ հյուսիս-արևելք, իսկ ապրիլի 6-ին Թուրքիայի Ամրի քաղաքից 32 կմ հյուսիս-արևելք: Ապրիլի 4-ին 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Վրաստանի Հիրսա քաղաքից 23 կմ հարավ-արևմուտք: Նույն ուժգնությամբ ստորգետնյա ցնցում է գրանցվել Թուրքիայի տարածքում, Էրզրում քաղաքից 91 կմ դեպի հյուսիս-արևելք:

**Տարածաշրջանից դուրս.** 6.0 մագնիտուդով գրանցվել է հինգ ուժեղ երկրաշարժ: Շարունակվում է ակտիվ մնալ Ճապոնիայի հյուսիս-արևելյան հատվածը, մարտի 31-ին տեղի է ունեցել 6.2 մագնիտուդով երկրաշարժ: Խաղաղ օվկիանոսի հարավում՝ Ֆիջի կղզիների տարածքում, մարտի 31-ին և ապրիլի 3-ին 2 երկրաշարժ է գրանցվել, երկուսն էլ 6.4 մագնիտուդով, զոհեր և ավերածություններ չկան: Ուժեղ երկրաշարժեր են տեղի ունեցել նաև ապրիլի 3-ին և 5-ին՝ ինդոնեզական ճավա և Տերնատե կղզիների շրջակայքում, որոնք համապատասխանաբար ունեցել են 6.7 և 6.0 մագնիտուդ: Ստորգետնյա տատանումներից կղզաբնակները խուճապի են մատնվել, հայտարարված ցունամիի վտանգը հերքվել է:

**ԱԻՆ ՍՊԱԾ գործակալություն**



## եղանակի տեսություն

**Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում**

Հանրապետության տարածքում ապրիլի 8-ի գիշերը առանձին շրջաններում, 8-ի ցերեկը՝ շրջանների զգալի մասում, 9-11-ը, 12-ի գիշերը սպասվում է անձրև, տեղ-տեղ ամպրոպ: 11-ին և 12-ի գիշերը տեղումները լեռնային շրջաններում կդիտվեն ձյան տեսքով: Քամին՝ հարավ-արևմտյան 5-10 մ/վրկ, 9-11-ին՝ առանձին վայրերում քամու ուժգնացում՝ 18-23 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 8-ի ցերեկը կբարձրանա 2-4, 9-ին ցերեկը կնվազի 4-5, 11-ի ցերեկը և 12-ի գիշերը եւս 4-6 աստիճանով:

Երեւանում Ապրիլի 8-ին հնարավոր է, 9-11-ը, 12-ի գիշերը սպասվում է անձրև, հնարավոր է ամպրոպ: 12-ի ցերեկը կդիտվի տեղումների դադար:

**ՌՈՍԳՈՍԱՏՐԱՆ ԱՐՄԵՆԻԱ**

**«Էլիտ գրուպ».** կյանքի նոր որակ

**Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում**

**E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am**

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում: Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում և այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



## Լավագույն ուսանողները կապահովվեն աշխատանքով

**<<< 1** Ողջունի խոսքից եւ Արտակարգ իրավիճակների նախարարության իր տեսլականը ներկայացնելուց հետո նախարար Արմեն Երիցյանը պատրաստակամ էր անկաշկանդ մթնոլորտում շփվել ակադեմիայի ուսանողների հետ ու պատասխանել նրանց հուզող բոլոր հարցերին: Դրանք հիմնականում վերաբերում էին

միջազգային համագործակցությանը, աշխատավարձերին ու փրկարար ծառայության կոչումներ շնորհելու կարգին: Նախարար Արմեն Երիցյանը նշեց, որ միջազգային համագործակցությունը շատ լայնածավալ է եւ ընթանում է տարբեր ուղղություններով, որոնցից մեկն էլ կրթական ծրագրերն են ու կադրերի վերապատրաստումը:

Աշխատավարձերի բարձրացումը նախարարության ամենացավոտ խնդիրներից է: ԱՄՆ նախարարի խոսքերով՝ ինքն արդեն համոզարարական է տվել նախարարության կազմում գործող բոլոր ՊՈԱԿ-ներին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ: Ըստ Արմեն Երիցյանի՝ բոլորն են գիտակցում, որ ցածր աշխատ-

վարձով հնարավոր չէ լավ մասնագետներին պահել համակարգում եւ ամեն հնարավոր պետք է արվի աշխատակիցների նյութական դրությունը բարելավելու համար: Հանդիպման ընթացքում Հայաստանի բազկամարտի ուսանողական առաջնությունում 1-ին տեղը գրավելու եւ գերազանց ֆիզիկական պատրաստակա-

նություն ցուցաբերելու համար ԱՄՆ նախարար Արմեն Երիցյանը շնորհակալագիր հանձնեց ակադեմիայի 2-րդ կուրսի ուսանող Արամ Մախսուդյանին՝ նշելով, որ ֆիզիկական պատրաստվածությունը պակաս կարեւոր չէ, քան կրթությունն ու մասնագիտական գիտելիքները:

Գոհար Բաղդասարյան

## Բացառել ցածրորակ շինարարությունը

**<<< 1** - Հայաստանում անկախությունից հետո մշակվեցին մի քանի 37Հ-ներ՝ Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր: 1994 թվականին ընդունվել են նախագծային սեյսմիկ նորմերը, 2006 թվականին դրանք վերանայվել են: Դա նշանակում է, որ մեր հանրապետությունում այնքան մեծ նշանակություն են դարձնում սեյսմիկ նորմերին, որ միայն այս բնագավառում նորմերը փոխվել են երկու անգամ, ու այդ նորմերի համաձայն, Երեւանը հիմա զսնվում է 9 եւ ավելի բալայնության սեյսմիկ զոնում, - նշում է Քաղաքաշինական պետական տեսչության գլխավոր մասնագետ Գագիկ Սարգսյանը:

րը հաշվի են առել, դասերը՝ յուրացրել: Վերջին 20 տարում կառուցված շենքերը շատ ավելի ամուր ու սեյսմակայուն են: Նույն բանը չի կարելի ասել հորհրդային տարիներից ժառանգություն մնացած շինությունների մասին: - Սեզ մոտ նորմեր ընդունվեցին ոչ միայն երկաթբետոնե կառուցարարական շինարարության, այլեւ՝ ֆաբրիկայի համար: Մոտ 1500 արհեստանոցներ են սարքվել ու ոչ մի անգամ ամրան չեն դրել ցարկածի մեջ: Հիմա, ըստ նորմերի, տիպի սեղադրվի, արդեն «համաձայն ցարկած» մոտ սեր-

կիցները կամայական ձեւափոխություններ չանեին ու ճիշտ շահագործելի բնակարանները, փլված շենքերի, հետեւապես նաեւ զոհերի թիվն անհամեմատ ավելի քիչ կլինեին: - Գյումրիում բազմաթիվ շենքեր կային, որոնց բնակիչներն առանձնաժամ էին ֆարաճարկածի մեկ շենք, ֆաբրիկայի շենքերը երկու ֆարաճարկածից է՝ մեջքեղը ցողախը լցված: Մի շենք ֆանդում էին, որ իրենց կառուցողները սեղադրեցին միայն մեջ: Կամ դասերում ոչ թույլատրելի չափերի անցքեր էին անում, կամ նկուղային հարկերում իրակա-

նային հարկ» հասկացություն, այսինքն՝ երկաթբետոնյա հիմնակմախքով շենքերը տիպի լինեն 14 հարկից ոչ ավելի: Եթե կիրառում են կոտե ամրանավորում, ապա՝ դրանք կարող են 16 հարկ լինել: Նորմերը չեն սահմանափակում հարկայնությունը, դարձապես, եթե կառուցում եք եղբ 14 կամ 16 հարկով սահմանափակվել, եթե դրանից բարձր եք սարքում, ապա՝ բարի եղբ կիրառել մեր նորմերով նախատեսված հասուկ մեթոդները, կամ մեր նորմերով նախատեսված լրացուցիչ կոնստրուկցիվ միջոցներ կիրառեք, - ասում է ԱԻՆ ՍՊԱԾ շենք-շինությունների սեյսմակայունության բաժնի պետ Գուրգեն Նամայանը:

թույլ է տալիս ամրացնել շենքը՝ առանց դրա շահագործումը դադարեցնելու ու բնակիչներին տարհանելու: Հայաստանում արդեն կան մի շարք շինություններ, որոնք այդ կերպ սեյսմամեկուսացվել են: Այդ բարձրիկներն առանձնացնում են շինությունը երկրակեղեից, ու երկրաշարժի ավելի շենք չի բարձրանում: Հասակորեն ասել, թե ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանում հին շենքերը կփլվեն, իսկ նորերը կանգնեն կմնան, սխալ կլինի: Մասնագետների հավաստմամբ՝ հորհրդային տարիներից մնացած շատ շենքեր կան, որոնք, եթե հաշվի չառնենք դրանցում կատարված կամայական ձեւափոխությունները, բավական ամուր են:



մին է առաջացել, - բացատրում է Քաղաքաշինական պետական տեսչության գլխավոր մասնագետ Գագիկ Սարգսյանը, - Հիմնականում ոչ մեկը չունի այդ տողաշինից մասնատված կմախքը, եղ ղառաձայն չեն կարող ասել, թե ինչ կլինի: ԱԻՆ ՍՊԱԾ շենք-շինությունների սեյսմակայունության բաժնի պետ Գուրգեն Նամայանը ասում է, որ խորհրդային ժամանակաշրջանից մնացած շենքերը չեն ամրացվել, իսկ 90-ականներին դրանցից շատերի վիճակն ավելի է վատացել սխալ շահագործման հետեւանքով: - Այդ շենքերի վրա ինժեներական կառուցվել են վերահարկեր, կցակառուցվել, նկուղային հարկերում կամայական ձեւափոխություններ են արվել: Այդ շենքերին դառը հետեւանքներ են ստասվում երկրաշարժի դեպքում: Դեռ Սպիտակի երկրաշարժից հետո գիտենք, որ եթե բնա-

նացնում էին վերակառուցում՝ ֆանդելով կրող դասերը: Ըստ շենքերում էլ բնակիչները, չհասկանալով ինչ բան է «դիֆրազման», դրանք օփոթում էին միջնորմի հետ եւ ուղղակի կտրում հանում էին՝ երկու սենյակները միացնելու նպատակով: «Դիֆրազման» հենց երկրաշարժի դեպքում շենքը դառնում էր համար: Ահա եւ շենքերը «հասնանդան» էին դարձել, - պատմում է Գուրգեն Նամայանը: Այսօր նոր կառուցվող շենքերի սեյսմակայունությունն ապահովող փաստաթղթային ու նորմատիվային բոլոր պայմանները կան: Նախագծայինից մինչեւ շահագործման հանձնելու փուլում իրականացվում է վերահսկողություն համապատասխան մարմինների ու հանձնաժողովների կողմից: - Նոր կառուցվող շենքերի ցուցանիշները, կարելի է ասել, բավարար են, բայց մեզ մոտ, օրինակ, կառուցվել են 16 հարկից բարձր շենքեր: Կա «սահմա-

նամագետը նշում է, որ չգիտի, թե արդյո՞ք 16-ից ավելի հարկ ունեցող շենքերը կիրառել են այդ մեթոդները, քանի որ ՍՊԱԾ-ը վերահսկողության իրավասություն չունի: - Քաղաքաշինության նախարարությունը շենք-շինարարության հանձնելուց առաջ վերջնական ստուգում է՝ արդյո՞ք այն կառուցվել է նախագծի ու նորմերի համաձայն, - ասում է Քաղաքաշինական պետական տեսչության գլխավոր մասնագետ Գագիկ Սարգսյանը, - դրական եզրակացությունից հետո մեր արդեն համարվում է, որ շինարարությունը ավարտված է: Ասել, որ եթե շենքը բարձրահարկ է, այն անողայման կփլվի, սխալ է, ուղղակի որոշ նկատառումները ելնելով՝ ավելի աղախով է կառուցել ցածրահարկ շենքեր: Շենքերի սեյսմակայունությունը, փաստորեն, պայմանավորված է մի քանի գործոններով՝ նախագծային ճիշտ մոտեցում, գործող նորմերի խիստ պահպանում, շինարարության բարեխիղճ ու բարձրորակ իրականացում, բնակիչների կողմից ճիշտ շահագործում: Շենքերի սեյսմակայունությունը բարձրացնելու համար կան մասնատուկ միջոցներ: - Սեյսմակայունության բարձրացման արբեր մեթոդներ կան: Մեր նորմերում ամրագրված կան դիմամիկական մարիչներ, կառուցող-անջատող համակարգեր, սեյսմակայունիչ բարձիկներ եւ այլն, - տեղեկացնում է ԱԻՆ ՍՊԱԾ շենք-շինությունների սեյսմակայունության բաժնի պետ Գուրգեն Նամայանը: Սեյսմակայունության բարձրացման մեթոդներից մեկը, օրինակ, ռետինամետաղական բարձիկների կիրառումն է, որը

թույլ է տալիս ամրացնել շենքը՝ առանց դրա շահագործումը դադարեցնելու ու բնակիչներին տարհանելու: Հայաստանում արդեն կան մի շարք շինություններ, որոնք այդ կերպ սեյսմամեկուսացվել են: Այդ բարձրիկներն առանձնացնում են շինությունը երկրակեղեից, ու երկրաշարժի ավելի շենք չի բարձրանում: Հասակորեն ասել, թե ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանում հին շենքերը կփլվեն, իսկ նորերը կանգնեն կմնան, սխալ կլինի: Մասնագետների հավաստմամբ՝ հորհրդային տարիներից մնացած շատ շենքեր կան, որոնք, եթե հաշվի չառնենք դրանցում կատարված կամայական ձեւափոխությունները, բավական ամուր են: - Խոտորադանելային շենքերը, իմ կարծիքով, լիարժեք կիրականացնելու երկրաշարժին: Դրանք կազմում են մեր բնակիչների մոտ 15 տոկոսը: Այդ 111 սեյսմիկ ու խոցելի շենքերի մոտ 12-15 տոկոսը կփլուզվեն: Քարե դասերով շենքերը մոտ 25 տոկոսն են կազմում՝ դրանց կեսը բարձր խոցելի է, կեսը՝ միջին խոցելի: Այսօրիսի համեմատություններ կարելի է անել, իսկ ընդհանուր առմամբ ասել, որ կոնկրետ այսօրվա կփլուզվի, այսօրվա կմնա՝ հնարավոր չէ, - ասում է ԱԻՆ ՍՊԱԾ շենք-շինությունների սեյսմակայունության բաժնի պետ Գուրգեն Նամայանը: - Ամրացնելու խնդիրը կա, մեթոդներին էլ են ծանոթ, միայն ֆինանսական միջոցներն են թակասում: Օրինակ, հարկերի բարձրացման մեթոդը, երբ ղեկ է դիֆրազմա դնել ու բարձրացնել հարկը: Բայց դա նշանակում է բնակիչներին սարհանել, միջնորմերը ֆանդել, երկաթբետոնե դասեր սարքել՝ ֆինանսների հետ կառուցված հարցեր են: Ամբողջ երեւանը, Հայաստանը մոտիկ վերակառուցել հնարավոր չէ, - կարծում է - Քաղաքաշինական պետական տեսչության գլխավոր մասնագետ Գագիկ Սարգսյանը: Խորհրդային տարիներից մնացած խոցելի շենքերն ամրացնելը պետության համար դեռեւս անլուծելի խնդիր է: Այս դեպքում առավել կարեւորվում է այն, որ բնակիչներն իրենք ավելի չբարդացնեն իրավիճակը՝ բնակարաններում ինքնագլուխ ձեւափոխություններ անելով: Հիշենք, որ ցանկացած ավելորդ միջամտություն ավելի է թուլացնում շենքը:

Աճի Ստեփանյան



## Պեղական հրդեհային տեսչությունը տեղեկացնում է

**2011 թ. առաջին եռամսյակի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 215 հրդեհ՝ շուրջ 48 միլիոն դրամի նյութական վնասով: Հրդեհից զոհվել է 7, վնասվածքներ ստացել 6 մարդ: Ոչնչացել է 11 շինություն, 5 միավոր ավտոտրանսպորտ, շուրջ 59 տոննա անասնակեր, գրանցվել է խոշոր հրդեհի 8 դեպք:**

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 33.2%, էլեկտրական սարքավորումների տեղակայման եւ շահագործման կանոնների խախտումը՝ 27.5%, վառարանների տեղակայման եւ շահագործման կանոնների խախտումը՝ 15.3%, կրակի հետ երեխաների խաղալը՝ 10.8%, հրկիզումները՝ 1.7% եւ այլ պատճառները՝ 11.5%:

Զոհերով հրդեհներ են գրանցվել հետևյալ տարածաշրջաններում՝ Լոռի եւ Արարատ՝ երկուսն էլ 1 մահով, Երեւան, Տավուշ եւ Գեղարքունիք՝ մեկական: Դրանց առաջացման պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, վառարանների եւ էլեկտրական սարքավորումների տեղակայման ու շահագործման կանոնների խախտումը: Զոհվածներից 2-ը երեխաներ են, իսկ 4-ը՝ տարեցներ (70 տարեկանից բարձր):

Վնասվածքներով հրդեհներ են գրանցվել հետևյալ տարածաշրջաններում՝ Երեւան եւ Հիրակ՝ երկուսն էլ 1 մահով եւ Արարատ՝ մե-

կական: Դրանց առաջացման պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, էլեկտրական սարքավորումների տեղակայման եւ շահագործման կանոնների խախտումը եւ հրկիզումը:

Հրդեհների 61%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 39%-ը՝ գյուղական բնակավայրերում: Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 8-ը խոշոր են, որոնց պատճառած նյութական վնասի գումարը կազմում է ընդհանուր նյութական վնասի շուրջ 67%-ը: Հրդեհների շուրջ 58%-ը տեղի է ունեցել բնակելի հատվածում: Չգալի թիվ են կազմում նաեւ բնակելի տներում զոհված (7-ից՝ 6-ը) եւ վնասվածքներ ստացած (6-ից՝ 3-ը) քաղաքացիները:

Հաշվի առնելով մարդկանց անվտանգության ապահովման կարելուրդունը՝ արտակարգ իրավիճակներից (հրդեհներից) ու դրանց ծանրագույն հետևանքներից խուսափելու նպատակով ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային տեսչության կողմից շարունակվում են հանրապետության հրդեհապայթունազուրկ օբյեկտների նպատակային ստուգայթերն ու հակահրդեհային վիճակի ուսումնասիրությունները: Ուսումնասիրության ենթարկվում են բոլոր օբյեկտների ղեկավարներին հանձնվել են կարգադրագրեր, նրանցից վերցվել են պարտավորագրեր՝ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման, ինչպես նաեւ առկա հակահրդեհային թերությունները սեղմ ժամկետներում

վերացնելու վերաբերյալ:

Պետական հրդեհային տեսչության իրականացրած լայնամասշտաբ ու օպերատիվ աշխատանքների արդյունքում դադարեցվել է թվով 8 հրդեհապայթումով ստանալ օբյեկտների շահագործում, 11-ին տրվել են նախազուրկացումներ, իսկ 474 օբյեկտների հրդեհային անվտանգության համար պատասխանատու պաշտոնատար անձինք ենթարկվել են վարչական տուգանքների՝ շուրջ 19 միլիոն դրամի չափով:

Պետական հրդեհային տեսչության աշխատակիցները «Արտակարգ ալիք» լրատվական ծառայության հետ համատեղ իրականացրել են ստուգայթեր (նկարահանումներ) ուսումնասիրվող մի շարք տարբեր նշանակության օբյեկտներում (ավտոագագավորման ծնշակային կայաններ, արտադրական օբյեկտներ եւ այլն): Վերջինը Արմավիրի մարզում էր, որտեղ իրականացվեց երկու հրդեհավտանգ օբյեկտների աշխատանքների դադարեցում: Այդ օբյեկտները շահագործվում էին հրդեհային անվտանգության կանոնների բազմաբնույթ խախտումներով, մասնավորապես՝

1. ա.ծ. Ա. Կարապետյանին պատկանող փայտանշակման արտադրամաս:

- արտադրամասը սարքավորված չէր հրդեհի ազդանշանային ինքնաշխատ համակարգով,
- բացակայում էր հակահրդեհային ջրացանցը,
- չկար ասփրագիտ (թեփա-

հեռացման) համակարգ:

• էլեկտրատնտեսությունում առկա էին բազմաթիվ թերություններ:

• օբյեկտն ապահովված չէր հրդեհաչիջման սկզբնական միջոցներով՝ կրակմարիչներով եւ այլն:

2. ա.ծ. Պ. Սարկոսյանին պատկանող թղթի արտադրամաս:

• արտադրամասը սարքավորված չէր հրդեհի ազդանշանային ինքնաշխատ համակարգով:

• բացակայում էր հակահրդեհային ջրացանցը:

• էլեկտրատնտեսությունում առկա էին բազմաթիվ թերություններ:

• օգտագործվում էր ինքնաշեն, բաց գալարագծերով ջեռոցման սալիկ:

• շինությունում կուտակված էր մեծ քանակությամբ արտադրական դյուրավառ թափոն:

• օբյեկտն ապահովված չէր հրդեհաչիջման սկզբնական միջոցներով՝ կրակմարիչներով եւ այլն:

Զնայած հրդեհների նախապայթուցիկ ուղղությամբ Պետական հրդեհային տեսչության կողմից իրականացվող զգալի աշխատանքների՝ դեռեւս անհնար է լինում խուսափել հրդեհներից:

Դրանց պատճառահետևանքային կապերի վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեցող իրավիճակը պայմանավորված է ինչպես համապատասխան պաշտոնատար անձանց կողմից խնդրի նկատմամբ դրսեւորած անտարբեր մոտեցմամբ, այնպես էլ քաղաքացիների մեղքով՝ կրակի

հետ անզգույշ վարվելուց, առաջացած հրդեհները հենց սկզբնական շրջանում հանգցնելու ձեւերը չիմանալուց, ինչն, ի վերջո, ոչ միայն նյութական կորուստների, այլեւ մարդկային զոհերի պատճառ է դառնում:

Հարկավոր է գիտակցել, որ ոչ մի վերահսկողություն եւ տեսնակա ցանկալի արդյունք չի տա, եթե հենց իրենք՝ քաղաքացիները, ըմբռնունով չվերաբերվեն հրդեհային անվտանգության հարցերին: Յուրաքանչյուրը պետք է գիտնա հակահրդեհային պաշտպանության վերաբերյալ հիմնական տվյալները, հրդեհի մասին տեղեկացման եւ հրդեհաչիջման գործողությունների կարգը, տարհանման ձեւերն ու միջոցները, եւ այլն: Փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ մարդիկ խուճապի չեն մատնվել եւ նրանց գործողությունները եղել են ակտիվ ու գիտակցված՝ հրդեհների հետևանքները ծանր չեն եղել, եւ ընդհակառակը: Այնպես որ՝ հրդեհներից եւ դրանց արդեհային հետևանքներից խուսափելու լավագույն եւ փորձված միջոցը եղել է մնում է հրդեհային անվտանգության կանոնների պահանջների իմացությունն ու անշեղ կատարումը, ինչպես նաեւ Պետական հրդեհային տեսչության կարգադրագրերով առաջարկված հակահրդեհային միջոցառումների լիարժեք իրականացումը:

**Սերգեյ Հայրապետյան**  
**ՊՅՏ ՀՀՎՀԲ բաժնի պետ**

## Պեղական հրդեհային տեսչության ստուգայթերը

(Պեղական հրդեհային տեսչության ստուգայթերը)



Արտակարգ իրավիճակների նախարարության հրդեհային տեսչության աշխատակիցներն անցյալ տարի նախարար Արմեն Երիցյանի հրամանով լայնամասշտաբ ստուգումներ իրականացրեցին հանրապետության հրդեհապայթունազուրկ օբյեկտներում: Պարզվեց, որ մայրաքաղաքում լուրջ վտանգ են ներկայացնում շարժական գազալցակայանները, որոնք կայանվում են բնակելի տներին շատ մոտ եւ շահագործվում են՝ անտեսելով հրդեհային անվտանգության կանոնները: Այս նախարարության եւ Ոստիկանության համագործակցության շնորհիվ, ամառվա ընթացքում Երեւանի տարածքում դադարեցվեց մոտ 30 շարժական գազալցակայանների շահագործումը:

Այս տարի վարչական սկզբից սկսվել է ստուգումների երկրորդ փուլը՝ այս անգամ գազաճնշակայաններում: Հրդեհային տեսչության մասնագետները օբյեկտների տերերին նախազուրկացրել են սեղմ ժամկետներում վերացնել հայտնաբերված թերությունները:

ԱԻՆ պետական հրդեհային տեսչության բաժնի պետ Սերգեյ Հայրապետյանն ասում է, որ եթե նշված ժամկետում եղած թերությունները չվերացվեն, օբյեկտի աշխատանքը կդադարեցվի:

Մարտի 17-ին Արագածոտնի մարզային հրդեհային տեսչությունը նախազուրկացրել էր «Կարս»/ակ ԱԳԼԵԿ-ի տնօրինությանը:

- Մեր ստուգայթի ընթացքում պարզվեց, որ այստեղ մեծ թվով

հակահրդեհային թերություններ արդեն իսկ վերացված են: Մի քանիսն էլ մոտակա օրերի ընթացքում նույնպես կվերացվեն: Մենք շրջեցինք եւ տեսանք, որ հակահրդեհային թերությունների զգալի մասն արդեն վերացված է, - ասում է ԱԻՆ պետական հրդեհային տեսչության բաժնի պետ Սերգեյ Հայրապետյանը:

Մարտի 28-ին վարչական տուգանքի ենթարկվեց «Չորամեջ» ՍՊԸ-ն: Ընկերության հաշվապահի ներկայացմամբ՝ Արագածոտնի մարզային հրդեհային տեսչության աշխատակիցների կողմից տրված նախազուրկացումների 90 %-ը հաշվի է առնված, թերությունները վերացված են:

- Տեղադրված են ազդանշանային համակարգը, կրակմարիչները, մնացել է միայն հրդեհային հիդրանտը, որը երկօրյա ժամկետում կտեղադրվի:

Տեսչության ներկայացուցիչները տնօրենից թերությունների վերացման պարտավորագիր վերցրեցին: Իսկ այն գազաճնշակայաններում, որտեղ տրված ժամկետն արդեն լրացել էր, ստիպված եղան դադարեցնել աշխատանքը:

Արտակարգ իրավիճակների նախարարությունը շարունակելու է հետեւողական աշխատանքները եւ պարբերաբար ստուգայթեր է կատարելու տարբեր հրդեհավտանգ օբյեկտներ:

## 2025. աշխարհը 600 քաղաքների ձեռքում

25 տարի հետո երկու միլիարդ մարդ՝ մոլորակի բնակչության մեկ քառորդը, կենտրոնանալու է աշխարհի 600 անենախոշոր քաղաքներում:

Աշխարհի հարստության 60 տոկոսը կենտրոնանալու է այդ քաղաքներում, որտեղ ապրելու է 735 մլն մարդ, իսկ նրանց մեկ շնչին ընկնող միջին եկամուտը կազմելու է տարեկան 32 հազար դոլար:

Այս տվյալները ներկայացրել է McKinsey Global Institute-ը՝ «Քաղաքային աշխարհ. նախագծելով տնտեսապես հզոր քաղաք» հետազոտության շրջանակներում, որում շարադրված են աշխարհի 2000 քաղաքների տնտեսական եւ դեմոգրաֆիական զարգացման հեռանկարները:

Հետազոտության համաձայն, մոլորակի ամենահարուստ քաղաքը Նյու-Յորքն է, դրան հաջորդում են Տոկիոն, Շանհայը, Լոնդոնը, Պեկինը: Փարիզը 7-րդն է, Գուանչժուուն՝ 19-րդը, Մեխիկոն՝ 20-րդը: 2025 թվականին թոփ 600-ի մեջ կմտնի 136 նոր քաղաք: 100 քաղաք չիմական կլինեն, ինչպես օրինակ Հարբինը, Շանտոուն, Գույանը, 13-ը՝ հնդկական, ներառյալ Հայդարաբադը եւ Սուրաթը, ինչպես նաեւ 8 լատինամերիկյան քաղաքներ:

600 քաղաքների ՀՆԱ-ն 2007-2025 թվականների կտրվածքով կմեծանա 34 հազար միլիարդով: Առաջին 100 քաղաքները կար-

տադրեն համաշխարհային հարստության 35 տոկոսը: Արեւմտյան եվրոպայի քաղաքներն անկում կապրեն, չնայած այն դեռին, որ ունեն համաշխարհային տնտեսության մեջ: Իտալական Միլանը 2025 թվականին 16-րդ տեղում կհայտնվի 20 հազարը գերազանցող միջին տարեկան եկամուտ ու-



նեցող ընտանիքների թվով: Բայց նրանից առաջ կանգնեն Շանհայը, Պեկինը, Մոսկվան, Մեխիկոն, Սան Պաուլոն եւ Սեուլը: Քաղաքների՝ ըստ բնակչության դասակարգման մեջ առաջին տեղում կհայտնվի Տոկիոն, որին կհաջորդեն Մունբայը, Շանհայը, Պեկինը եւ Դելին: Մինչեւ 15 տարեկան երեխաների թվով՝ Կինշասան, Կարաչին, Դական, Մումբայն ու Կալկաթան (Նյու-Յորքն 9-րդն է, Լոնդոնը՝ 18-րդը եւ Փարիզը՝ 23-րդը):



## Ես ամաչում եմ, երբ կարմրում եմ

**Ես կանգնած եմ տասնյակ ինձ նայող հայացքների առջև: Դա արդեն րոպեներ է ձգվում, ես պետք է ինչ-որ բան ասեմ, բայց բառերն ասես թաքնվել են ինձանից: Այտերս վառվում են, շատ շոգ է, բայց ես դեռ պայքարում եմ, փորձում եմ խորը շնչել, անարդյունք: Կուրծքս սեղմվում է: Մեկը ժպտում է, մյուսն աչքերն է մանրակրկիտ սահեցնում վրայով: Ամենաշատը ցանկանում եմ գետնի տակն անցնել:**

Սուր զգացումներ՝ անոթ, ուրախություն, զարմանք, հետաքրքրություն, այս ամենի ազդեցությունից բուրբուխ էլ կարմրում եմ: Թուխ մաշկ ունեցող մարդկանց պարագային դա այդքան էլ տեսանելի չէ, այնուամենայնիվ նրանք ես զգում եմ, թե ինչպես է «այրվում» դեմքը: Որոշ «երջանիկներ» ուշադրություն չեն դարձնում, բայց ոմանց, ինչպես ես ինձ համար, դեմքին անթույլատրելի կարմիրներն անուռնեղ խնդիր է:

Մենք կարմրում էինք, երբ մեզ դպրոցում զրատախտակի մոտ էին կանչում, կարմրում ենք, երբ ինչ-որ մեկը մեզ է նայում կամ հարց է տալիս: Ինչպես նաև, այն ժամանակ, երբ խոսակցությունը սիրո կամ ինտիմ հարցերին է վերաբերում, այդ ամենը մեզ քերձի մեջ է գցում: Փորձում ենք սկսել խոսակցությունը՝ արդեն իսկ վախենալով. «Գուցե, ես նորից...»:

Մենք ամաչում ենք եւ փորձում պայքարել բնությունից տրված խոհեմության դեմ, բայց ոչինչ չի ստացվում: Ամոթի եւ անօգնականության զգացումն ավելանում է, մենք հրաժարվում ենք մեր հավակնություններից եւ խուսափում հասարակական վայրերում ելույթ ունենալուց, ընկերակց շրջապատից:

Խնդիրներ կարող են առաջանալ աշխատանքի վայրում եւ հակառակ սեռի հետ հարաբերություններում: Այնինչ, կարմրելը շատ բնական է:

### Բնության մեխանիզմ

Ամժանոթ հայացքից չպաշտպանվածության զգացում է առաջանում, թվում է, թե ուրիշներն ավելի շատ բան են գիտեն մեր մասին, քան մենք ինքներս:

«Մենք կարմրում ենք այն պահին, երբ լայնանում են մեր մազանոթները, մանր արյունատար անոթները, այս ֆիզիոլոգիական ռեակցիան օգնում է օրգանիզմին արագ իջեցնել մաշկի ջերմաստիճանը: Տարբեր մարդկանց մեջ դա տարբեր արագությանբ եւ ինտենսիվությամբ է տեղի ունենում: Երբ մենք շոգում ենք, անոթները լայնանում են, ջերմություն հաղորդելով, երբ մրսում ենք, նրանք նեղանում են, եւ մենք սփռվում ենք: Թերեւս, որոշ ժամանակ հետո, մաշկը կարող է մրսել եւ առաջացնել արհեստական լայնացում, այդպես մենք ցրտին կարմրում ենք», - պատմում է հոգեբան, կենսաբան Յակով Կոչետկովը:

Որոշ մարդիկ հակված են ավելի շատ կարմրել, քան մյուսները: Դա կախված է նրանց մարմնի կառուցվածքից եւ խառնվածքից, մաշկի յուրահատկությունից: Սովորաբար, դա լինում է այն մասերում, որտեղ հագուստը չի ծածկում, անմիջապես շփվելով շրջապատի հետ՝ դեմք, ականց, պարանոց: Մենք կարմրում ենք ոչ միայն եղանակից, այլեւ, երբ մեզ վրա ուշադիր նայում է անձանոթ անցողը կամ որեւէ մեկը մեզ հաճախություն է անում: Ինչո՞ւ է դա բացատրվում:



«Ամոթների նեղացմամբ եւ լայնացմամբ կարգավորվում է նյարդային համակարգը, վերջինս արձագանքում է սթրեսին (եղանակ, ֆիզիոլոգիկան ծանրաբեռնվածություն, այլ մարդկանց հետաքրքրությունը մեր հանդեպ) եւ գործում է մեզանից անկախ՝ օրգանիզմը պատրաստելով մարտական դիրքին:

Արագանում են սրտի զարկերը, ավելանում է ադրենալինը, լարվում են մկանները: Նրա հետ է կապվում նյարդային համակարգը՝ թուլացնելով պաշտպանիչ լարվածությունը, օրգանիզմը թուլանում է», - բացատրում է հոգեբանը:

### «Ես» եւ «նրանք»

«Կենդանիները չեն կարմրում, կարմրում են միայն մարդիկ»: Այն դեպքում, երբ մենք հայտնվում ենք այլ մարդկանց շրջապատում:

Նորածինները չեն կարմրում, հազվադեպ կարմրում են ծեր մարդիկ, ավելի հաճախ՝ դեռահասները:

Ոչ ոք չի կարմրում ինքն իր հետ մեծակ մնալուց, մինչեւ որ նկատում է, որ ինչ-որ մեկը տեսնում է իրեն: Նույնիսկ այն միտքը, թե ինչպես է մեկ այլ անձը մեզ ընդունում, կարող է լարվածություն առաջացնել, եւ մենք

անկարող ենք նրա հետ պայքարել: Դեռ բացահայտված չէ, թե որտեղի՞ց է առաջանում ամոթի զգացումը, կարծես թե, մեր թուլությունն ու թերությունները բուրդին տեսանելի են դարձել: Այդ պահերին ինքնավստահ, զսպված մարդու կերպարը, որին մենք ընտելացրել ենք շփման մեջ, մասնագիտական եւ երբեմն նաև անձնական կյանքում, համկարծ ճեղքվածք է տալիս»,- պարզաբանում է հոգեբան Մարիա Անդրիանովան, - Մեզ թվում է, թե ուրիշն ավելի շատ բան գիտի մեր մասին, քան մենք: Առա-



ջանում է տանջող զգացում՝ չպաշտպանվածություն ուրիշի հայացքից եւ վախ՝ կորցնելու հավասարակշռությունը»:

Մենք մեզ զգում ենք խղճուն, ծիծաղելի եւ ակնհայտորեն տեսնում ենք այն անհամապատասխանելիությունը, ինչին մենք ձգտում ենք:

### Ինչո՞ւ ենք մենք կարմրում...

Դեռ Զարլզ Դարվինն ուշադրություն է դարձրել այն բանին, որ որոշ ցեղատեսակների ներկայացուցիչները, ովքեր քիչ հագուստ են կրում, կարմրում են ոչ միայն դեմքով, այլեւ մարմնի այլ մասերով: Նա այդ երեւույթը բացատրում է նրանով, որ մարմնի բաց մասերի մաշկն ավելի շատ է օդ շնչում, արելի հետ շփվում, ջերմաստիճանը փոփոխում: Արյունատար անոթները պարբերաբար նեղանում եւ լայնանում են, դրանով ավելի շատ տարածվում մարմնի այլ մասերում: Այնպես որ, մենք կարմրում ենք միայն դեմքով:

### Մեր իսկ ցանկություն...

Որպեսզի մենք՝ էրիտրոֆոբիա ունեցողներս, կարմրենք, պետք է միայն ինչնորոգել այդ մասին մեր ինքնությանը: «Դու դեռ կարմրում ես», - հարցնում է ինձ իմ գործընկերը, իմանալով, որ ես գրում եմ այդ մասին, իմ այտերն ու ճակատն այրվում են, բայց կա եւ լավ նորություն, եթե բնությամբ կարմրելու հատկությունը հնարավոր չէ կասեցնել, ապա էրիտրոֆոբիան հնարավոր է նվազեցնել, տառապանքը թեթեւանալով հասցնելով:

### Մեր իսկ ցանկություն...

Քորթեք առանձնացնել փաստերը ենթադրություններից: «Նա ինձ նայեց» - փաստ, «ես խառնվեցի» - փաստ, «ես նրան հիմար թվացի» - ենթադրություն:

«Մտերիկ ապրել նրա հետ, իսկ դրա համար պետք է թույլ տալ թեզ կարմրել», - պնդում է Մարիա Անդրիանովան: Զոգեբանները խորհուրդ են տալիս չխուսափել լարված իրավիճակներից, դրա համար կազմել «աստիճանաբար բեռնավորման ծրագիր»՝ հեշտից ավելի դժվար: Նախ, հոգեբանը կուղարկի հարեւանի հետ եղանակի մասին զրուցելու: Մենք, իհարկե, կկարմրենք, այնուամենայնիվ, ծրագրին հետեւելով, կշարունակենք զրույցը եւ կհամոզվենք, որ սարսափելի ոչինչ չի պատահել, մենք չենք անցել գետնի տակը, իսկ հարեւանը նախկինի պես պատասխանում է մեր հարցերին: Այդպես մի քանի անգամ, մինչ քերտույթը մեզ համար սովորական կդառնա: Կարող ենք անցնել մեզ համար ավելի հուզիչ սյուժեներին, հրապարակայնորեն ելույթ ունենալ:

«Շեղանկեր, թե ինչպես ե՞ք կարմրում եւ դուք կտեսնենք, որ հուզմունքը չի աճում, որոշ ժամանակ անց այն սկսում է ինքնընտանույթից նվազել: Դա նշանակում է, որ հնարավոր է համբերել եւ շարունակել զեկույցը, իսկ եթե միաժամանակ ինքներդ Ձեզ ասեք. «ես կարմրում եմ», ապա հուզմունքի ներկն ավելի շուտ կանհետանա», - առաջարկում է Յակով Կոչետկովը:

### Ամոթից մինչեւ հրապարակայնություն...

**Կարմրելը.** ֆիզիոլոգիական գործընթաց է, որը կապված է մեր գիտակցության հետ, երբեմն մենք վախենում ենք հիմար, թույլ, չափազանց հուզական երեւալ:

Երբեմն որ «կբռնացնեն» մեր «անշնորհք» մտքերը:

Մենք կարծում ենք, որ՝

- շրջապատող տրամադրությունը քննադատական է, պատրաստ են ծիծաղել, մեղադրել մեզ մանրուքների համար:
- շրջապատում չափազանց ուղղամիտ են եւ նկատում են նույնիսկ թաքնված թերությունները:
- ցանկանում ենք ուրիշի աչքերում իդեալական երեւալ, պահանջկոտ ենք ինքներս մեր հանդեպ եւ կարծում ենք թերություն է այն, ինչն ուրիշները յուրահատկություն կհամարեն:

### Ինչ անել

Փորձեք առանձնացնել փաստերը ենթադրություններից: «Նա ինձ նայեց» - փաստ, «ես խառնվեցի» - փաստ, «ես նրան հիմար թվացի» - ենթադրություն:

Նույն աստիճանի համոզմունք ունեն եւ ուրիշները: «Նա ուզում է այնպիսի վզկապ, ինչպիսին ինձ է» կամ «Նա հիացած է իմ աչքերի գույնով»:

Ուշադրություն դարձրեք զրուցակցի ներքին զգացողությանը, ձայնի տոնայնությանը, միմիկաներին, ժեստերին, մթնոլորտին (փողոցային աղմուկ, սուրճի բույր, պատերի գույն): Փորձեք, մինչեւ որ կմիանաք զրույցին՝ հեշտ եւ սովորական:

Բարձրաձայնեք ձեր զգացմունքները, եթե դուք անհարմարություն եք զգում, ապա ասեք դրա մասին:

«Ես ինձ անհարմար եմ զգում, չգիտեմ՝ ինչպես վարվել»: Նոր շրջապատում դուք կարող եք ասել. «Չհարավոր է, որ առաջիկա 30 րոպեներին ես ամաչեմ եւ կարմրեմ»:

Դուք անկեղծ զգուշացրել եք եւ կարող եք հանգիստ կարմրել՝ չսպառելով ուժերը ձեր հետ պայքարում:

### Դա առավելություն է

Եթե մենք անտարբեր չենք այն մարդու հանդեպ, ում կործին կարմրում ենք, ապա վախը կրկնապատվում է, առավել եւս, եթե մենք փորձում ենք թաքցնել մեր զգացմունքը: Այն, ինչ մենք ցանկանում ենք թաքցնել, համկարծ հայտնվում է բուրդին ի տես:

Զգացմունքները թաքցնելու ցանկությունն ակնհայտ է դառնում, դա վիրավորում է մեր ինքնասիրությունը:

30-ամյա Սերգեյն ասում է. «Տղամարդը պետք է զսպված լինի, տիրապետի ինքն իրեն: Երբ ես կարմրում եմ, թուլամոռ թե երեւում, զգացմունքային տիկնոջ տպավորություն եմ թողնում»:

Տարածված համոզմունքներից է, թե շրջապատը վատ է մտածում կարմրող մարդու մասին, Որան անհաջողակ համարում, վատ վերաբերվում:

«Դա այդպես չէ: Երբ ես հարցնում եմ կարմրելու հատկությունից ամաչող հաճախորդին, դադարել է՞ որեւէ մեկը շփվել իր հետ իր կարմրելու պատճառով, մեղադրել կամ ծիծաղել է՞ նրա վրա, պարզվում է, որ այդպիսի բան չի եղել եւ ոչ մեկի հետ», - համոզված է Յակով Կոչետկովը:

Զթաքնված կարմրությունը, որը հայտնվում է մեր դեմքին, կարող է հետաքրքրել, հուզել, հիացնել:

Բրիտանացի հոգեբաններն ապացուցել են, որ այդպիսի մարդիկ շրջապատի մարդկանց մեջ առաջացնում են զգացմունք եւ մտերմություն, նրանց առավել հեշտորեն են ներում սխալները, քան նրան, ով ներողություն է խնդրում, կամ որեւէ այլ կերպ է արտահայտում իր անթուր:

### Անճա Կարապետյան հոգեբան-խորհրդատու

Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել [hogeban@emergency.am](mailto:hogeban@emergency.am) էլ. [hwugtnol](mailto:hwugtnol):



## Կործանված օդանավի հետքերով

Ատլանտիկայում կործանված Ա330 ինքնաթիռի բեկորների մեջ գտան երկու տարի առաջ զոհված ուղեւորների մարմինները

2009 թ. Ատլանտիկայում կործանված Ա330 Airbus-ի բեկորների հայտնաբերման տեղում երկուշաբթի գտել են նաև 228 զոհված ուղեւորներից ու անձնակազմի անդամներից մի քանիսի մարմինները:

Ինչպես հաղորդում է The Daily Mail-ը, ավիահաղետի զոհերի մարմինները գտնվել են 4 հազար մետր խորության վրա: Ֆրանսիայի էկոլոգիայի եւ տրանսպորտի նախարար Նատալի Կոստյուշկո-Մորիզեն հաստատել է, որ ինքնաթիռի «մի մեծ հատվածում» մարմիններ կան, որոնք «հնարավոր է ճանաչել»:

Աղետից անմիջապես հետո իրականացված նախնական որոնումները հնարավորություն տվեցին գտնելու 50 մարմին ու ինքնա-

թիռի հարյուրավոր բեկորներ: Այս, թվով արդեն չորրորդ, արշավախումբը գտել է ինքնաթիռի «տուր-քիններն ու բեկորի հատվածները», ինչպես նաև շարժիչներն ու ակեռը:

Փորձագետները նշում են, որ օվկիանոսի հատակում գտնված բոլոր բեկորներն այնքան կանոնավոր են «դասավորված», որ հույս են ներշնչում գտնելու նաև այսպես կոչված «սեւ արկղերը», որոնք, հնարավոր է, լույս կսփռեն սարսափելի աղետի պատճառների վրա: Սակայն արդեն իսկ հայտարարվում է, որ այդքան երկար ժամանակ ջրում մնալուց հետո դրանք կարող են եւ «չկարդացվել»:

Air France ավիաընկերության Airbus-A330 օդանավը, որն իրականացնում էր Ռիո դե Ժանեյրո-Փարիզ չվերթը, կործանվեց Ատլանտիկայի վրա 2009 թ. հունիսի 1-ին: Բոլոր 228

ուղեւորները զոհվեցին:

Աղետի պատճառները մինչ օրս պարզ չեն: Ավիաընկերության հետախուզության ֆրանսիական Բյուրոն երեք որոնողական արշավ է կազմակերպել, որոնք ֆրանսիական կառավարության, Airbus-ի ավիակոնստրուկտորի եւ Air France ավիաընկերության վրա նստել են 30 միլիոն եվրո եւ ավարտվել անարդյունք:

Նախկինում Զետախուզման բյուրոն հայտարարել է, որ զլխավոր վարկածներից մեկն օդի ճնշման զգայակների (այսպես կոչված Պիկոյի խողովակների) սառցակայման վարկածն է: Այդ գործիքը նախատեսված է օդային հոսքերի արագությունը չափելու համար: Դրա խափանումը կարող է համակարգիչներին ինքնաթիռի արագության մասին ոչ ճիշտ տվյալների հաղորդման պատճառ հանդիսանալ:

Օդաչուները, արագության մա-



սին տեղեկության անբավարարության պատճառով, կարող էին կանավելի մեծ արագություն զարգացնել, քան կարելի է, կամ չնկատել, որ արագությունն անբավարարելի չափով նվազել է:

Ըստ որոշ տվյալների, հենց դա էլ տեղի է ունեցել A330-ի դեպքում:

տարբեր համակարգեր հակասական տեղեկություններ են տվել արագության վերաբերյալ: Նախկինում Airbus-ը խորհուրդ է տվել փոխել գործող սարքերը ավելի ժամանակակիցներով: Սակայն, ինչպես հաղորդվում է, Air France-ը դա չի արել:

## Ռուս սեյսմոլոգները 8.5 մագնիսիտուդով երկրաշարժ են կանխատեսում Ճապոնիայում

Վտանգ կա նաև ՌՊ-ի տարածքում

Ճապոնիայում մոտակա ժամանակներս կարող է նոր երկրաշարժ տեղի ունենալ՝ 7,5-8,5 մագնիստուդով: Ստորգետնյա ցնցումները կարող են ցունամիի ակիբ առաջացնել: Այդպիսի եզրակացության են եկել սախալինցի սեյսմոլոգները: Ինչպես հավաստիացնում է ՌԳՄ «Օնվային երկրաբանության եւ գետֆիզիկայի ինստիտուտի» տնօրեն, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Իվան Տիխոնովը, նոր ցնցման էպիկենտրոնը գտնվելու է մարտի 11-ի երկրաշարժի էպիկենտրոնից 200 կմ արեւելք:

«Այնտեղ մի հատված կա, որ հիմա առանձնանում է, եւ որտեղ ուժեղ երկրաշարժ չի եղել: Այդ շր-

ջանը կարծես «ապրում է» առանձնացած մնացած տարածքից, որտեղ հիմա հետցնցումներ են գրանցվում», - բացատրել է Տիխոնովը:

Նա ընդգծել է, որ վերջերս ներկայացրել է հետցնցումների գործընթացի հետագա զարգացումների վերլուծություն, ըստ որի՝ իր նկարագրած սցենարը թեւեւ պարտադիր չէ, բայց հավանական է:

Այս ինստիտուտի գիտնականները կանխատեսել էին ճապոնական Յոկայոգ եւ Յոնայու կղզիների արեւելյան մասում հնարավոր ուժեղ երկրաշարժը, բայց չէին սպասում, որ այն այդքան ավերիչ կլինի:

Մինչ այդ, Ճապոնիայի երկրաշարժի զոհերի թիվն աճում է: Վերջին տվյալների համաձայն,

այն մոտենում է 28 000-ին: Պաշտոնապես զոհված է համարվում 12 321 մարդ, եւս 15 347-ը համարվում են անհետ կորած:



Ռուս գիտնականները դեռ մի քանի տարի առաջ կազմել էին Յոկայոյից եւ Յոնայուից արեւելք 1993-ից 2010 թվականներին տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի

օջախային գրաֆիկը:

Այդ ժամանակ էլ հայտնաբերվել էր 800 կմ երկարությամբ հանգստության գոտին, որտեղ, գիտնականների հաշվարկներով, մինչեւ 2011 թվականի մարտի 20-ը կարող է 7.6 եւ ավելի մագնիստուդով երկրաշարժ տեղի ունենալ:

«Այդ դատարկությունը լցված էր 2011 թվականի մարտի 11-ի աղետով: Այդպիսով, այդ շրջանում ուժեղ երկրաշարժերը տեղի են ունենում 100 տարին մեկ: Երկրաշարժերը ենթարկվում են այդ օրինաչափությանը, եւ ճապոնիայի վերջին սեյսմիկ իրադարձությունը չխախտեց այն», - փաստել է գիտնականը:

Նա բերել է նաև ԱՄՆ-ի գետնֆիզիկական ծառայության տվյալները, որոնք ճապոնիայի մեգաերկրաշարժից հետո առաջին օրերի ընթացքում գրանցել են 6-7,1 մագնիստուդով մոտ 170, իսկ 10 օրվա մեջ՝ 630 հետցնցում:

## Եւ՝ գազաթներիս, եւ՝ հողում

Այս պահին Երկրի բոլոր անկյուններն էլ, այս կամ այն չափով, կրում են անտրոպոգեն գործուներության բացասական ազդեցությունը: «New Scientist» ամսագրի վերջին հոդվածը դրա ապացույցն է:

Չարավային Մեծի համալսարանի գիտաշխատողները ծյան եւ հողի փորձամուշներ են վերցրել ամենաբարձր ու ամենաչեղի գազաթներից մեկից՝ Էվերեստից:

Չյան փորձամուշները վերցվել են յուրաքանչյուր 300 մետրը մեկ՝ 5 334-7 772 մետր բարձրություններում: Բոլոր նմուշներում էլ գրանցվել է մկնդեղի ու կադմիումի բարձր պարունակություն, որն անվտանգ չի կարելի համարել: Մկնդեղի պարունակություն է հայտնաբերվել նաև հողի մեջ:

## Հայտարարություններ

### Պարզեցված ընթացակարգով գնում կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի մարտի 28-ի թիվ 2 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն:

### Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ N ԱԻՆ-ՅԾԾ-ՊԸ-ԱՊՁԲ-11/2

Պատվիրատուն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Պուշկինի 25 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության կարիքների համար բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերումը:

Պարզեցված ընթացակարգի

հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Պուշկինի 25, 4-րդ հարկ, 401/1 սենյակ, Գնումների եւ մատակարարման բաժին (պատասխանատու՝ Ս. Արզումանյան, հեռ. 53-15-02):

Պատվիրատուին ներկայացվող պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերի եւ հայտերի ներկայացման վերջնաժամկետի վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ ՀՀ Ֆինանսների նախարարության էլեկտրոնային հասցեով՝ www.gnumner.am ինտերնետային կայքում:

\*\*\*

### Պարզեցված ընթացակարգով գնում կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի

մարտի 28-ի թիվ 2 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն:

### Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ N ԱԻՆ-ՅԾԾ-ՊԸ-ԱՊՁԲ-11/3

Պատվիրատուն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Պուշկինի 25 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության կարիքների համար հատուկ նպատակային նյութերի ձեռքբերումը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Պուշկինի 25, 4-րդ հարկ, 401/1 սենյակ, Գնումների եւ մատակարարման բաժին (պատասխանատու՝ Ս. Արզումանյան, հեռ. 53-15-02):

\*\*\*

### Բաց ընթացակարգով գնում կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի մարտի 29-ի թիվ 2 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն:

### Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ N ԱԻՆ-ՅԾԾ-ԲԸԱՊՁԲ-11/1

Պատվիրատուն ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությունը, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Պուշկինի 25 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգ:

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համար հանրաթների (հագուստ) ձեռքբերումը:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն, որը գտնվում է ՀՀ, ք. Երեւան, Պուշկինի 25, 4-րդ հարկ, 401/1 սենյակ հասցեով, Գնումների եւ մատակարարման բաժին (պատասխանատու՝ Ս. Արզումանյան, հեռ. 53-15-02):

Պատվիրատուին ներկայացվող բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերի եւ հայտերի ներկայացման վերջնաժամկետի վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ ՀՀ Ֆինանսների նախարարության էլեկտրոնային հասցեով՝ www.gnumner.am ինտերնետային կայքում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն

